թեամբ հանգեաւ 'ի Տէր 'ի Միլանէ քա-
ղաք, և անդ թաղեցաւ. և յետոյ բե-
րաւ 'ի Կոստանդնուպօլիս: Յաւուրս սորա
երանելի Հայրապետն Ներսէս՝ դեղ մա-
հու ընկալեալ 'ի Պապ թագաւորէն, փո-
խեցաւ յաշխարհէս: Եւ յոմանց ասի թէ
ԻԵ. ամ թագաւորեալ, յաւուրս սորա
գողանայքն քրիստոնեայք և Հրեայք զմի-
մեանս և սպանանէին՝ անհաւատ կոչելով
զիրեարս: Արտեմիոս Ճղնաւորն սեն-
տուր էր սորին, և հրաժարեալ գնաց յա-
նապատ. և անդ կացեալ հանգեաւ 'ի
Քրիստոս:

Արկադէոս որդի Թէոդոսի՝ ընդ եղբօր
իւրոյ Ոնորիոսի՝ սկսան յամի Տեառն
Գ.Ղ'Թ. թագաւորեալ ամս ԺԳ: Էր սա
այր բարի և հանճարեղ ամենայն զօրու-
թեամբ: Յաւուրս սորա թագաւորն Ալա-
րիգոս Գօթացւոց 'ի Թունիզէ եանց զծովն
բազում զօրօք, և հասեալ 'ի Հռոմ՝ ե-
մուտ 'ի քաղաքն և սկսաւ անխնայ կոտո-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան